եմ ուր Մակար Կաթուղիկոս դեռ վարդապետ ժամանակ և Բագրևանդայ առաջնորդ Սիմէօն վարդապետ մեծ համարում ունէին վրան։

Առաջնորդ Սիմէօն վարդապետ Ատովմեան որ բաւական գործունեայ առաջնորդ մի էր և հմուտ ի գրոց. 57 յունվար 14 Թուով կը գրէ առ Պետրոս աղա. «Մեծի բարեպաշտ ազգասիրութեան . . .» ևլն. և կը գրէ Հայոց վերայ բարդուած զուրայի տրոց կանոնաւորման մասին աշխատի։ 57 փետր. 22 Թուով ևս ազգիս Թշուառ վիճակն կը նկարագրէ Նիզամիյէ տրոց համար։ 57 յունիս 20 Թուով զՓարգիպաշեան ազգատեաց հայն պաշտօնանկ արած լինելուն համար։

1858 յունվար 26 Թուով Կարնէն կը գրէ Ղազար վարդապետ Կորաւցեան վերատեսուչ ընդհ. քիւրդիստանի. «այն որ իւր ընտանեաց հոգ չտանիր հաւատքը ուրացած է». և Թէ վարդապետի մը և իշխանի մի ընտանիքը իւր ազգն է, սոյն նամակով օրինակ կը բերէ զՍուրբն Վարդան և այլ ազգասէր անձինք, կը յորդորէ զժողովուրդն Ալաշկերտի ի սէր . . . ։

1860 սեպ. 5 Թուով Մակար արքեպիսկոպոս հրամանաւ վեհափառին կը գրէ, որ միջնորդէ ի պատրիարքարան և ժողովրդեան, որ Բագրևանդայ առաջնորդ Զաքարիա «բազմափորձ» վարդապետն եպիսկոպոսութեան աստիճան բարձրացնէ։

1861 օգոս. Թուով Զաքարիա Արքեպիսկոպոս Իւչ-Քիլիսէի մէջ ուսումնարան բանալով կը յորդորէ Պետրոս աղան որ օժանդակ լինի իւրեան։

1863 յունվար 10 Թուով Կտուց անապատի վանահայր Պօղոս վ. (այժմ եպիսկոպոս) կը գրէ առ Պետրոս աղա որ առատաբար օգնէ Անապատին և վանքի միաբանութիւնը խղճալի դրութենէ ազատէ ևլն։